ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆՑՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23052020-06-0057 վկայականը և «ՄԱՐ-ՄՈՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված 2024 թվականի մայիսի 14-ի անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Լեռնանցք 4-րդ փողոց 14» հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-040-0013-0005 կադաստրային ծածկագրով 0,11759 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և դրա վրա կառուցված 118,4 քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ շինությունը որպես բնակելի տուն կառուցապատելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Անշարժ գույքի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 1 180 000 ՀՀ դրամ:

3. Աճուրդում հաղթող ճանաչված անձից հետ գանձել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և անշարժ գույքի գնահատման հետ կապված ծախսերը: